ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 1

2022թ. օգոստոսի 25-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը
(բանավոր հարցման ձևով)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2022-2023 ուստարվա ֆակուլտետի աշխատանքային պլանի հաստատում
2. 2022-2023 ուստարվա մագիստրատուրայում ուսումնառության կազմակերպման մասին

1. Լսեցին - 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանի հաստատման հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց ֆակուլտետի տարեկան աշխատանքային պլանը

Որոշեցին – հաստատել 2022-2023 ուստարվա աշխատանքային պլանը։

2.Լսեցին – 2022-2023 ուստարվա մագիստրատուրայում ուսումնառության կազմակերպման մասին հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Արա Հկոբյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Աղամյանը, երաժշտության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆեսորի պ/կ Սարգիս Էլբակյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Սաթենիկ Մելիքյանը։

Ելույթ ունեցողները նշեցին, որ մասնագիտական առարկաների արդյունավետության համար նպատակահարմար է ուսումնառությունը կազմակերպել առկա ձևաչափով։

Որոշեցին – Գեղարվեստական կրթության ֆակուլտետում, հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները, 2022-2023 ուստարվա մագիստրոսական ուսումնառությունը կազմակերպել առկա ձևաչափով։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 2

2022թ. սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը
(բանավոր հարցման ձևով)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Լսեցին - Ներքոհիշյալ ուսանողների պրակտիկա (կրկնակի) անցնելու թույլտվության մասին հարցը.
Հագուստի մոդելավորում՝ Ավետիսյան Թամարա- 4-րդ կուրս, Պալոյան Գոհար -3-րդ կուրս
Կերպարվեստ՝ Նիկողոսյան Մելինե- 4-րդ կուրս, Ստեփանյան Սյուզան- 3-կուրս (հեռակա)

Որոշեցին – թույլատրել հագուստի մոդելավորում բաժնի 4-րդ կուրսի ուսանող Թամարա Ավետիսյանին անցկացնել 2020-2021 ուստարվա 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնական պրակտիկան (3շաբաթ)։

Թույլատրել հագուստի մոդելավորում բաժնի 3-րդ կուրսի ուսանող Գոհար Պալոյանին անցկացնել 2020-2021 ուստարվա 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսումնական պրակտիկան (3շաբաթ)։

Թույլատրել կերպարվեստ բաժնի 4-րդ կուրսի ուսանող Մելինե Նիկողոսյանին անցկացնել 2020-2021 ուստարվա 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկան (6շաբաթ)։

Թույլատրել կերպարվեստ (հեռակա) բաժնի 4-րդ կուրսի ուսանող Սյուզան Ստեփանյանին անցկացնել 2020-2021 ուստարվա 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկան (4շաբաթ)։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 3

2022թ. սեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2022-2023 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները
2. 2022-2023 ուս. տարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատում
3. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 26 անդամից 17-ը

1. Լսեցին – 2022-2023 ուստարվա առկա ուսուցման ընդունելության արդյունքները:

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը ներկայացրեց ընդունելության արդյունքները՝ օգոստոսի 27-ի դրությամբ ուսանողների թիվը կազմում է.

առկա բակալավրիատ՝ 99 ուսանող

մագիստրատուրա՝ 19 ուսանող

Որոշեցին – ընդունելության արդյունքները համարել բավարար:

2. Լսեցին - 2022-2023 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաների հաստատում

Արտահայտվեցին – Ֆակուլտետի ամբիոնների վարիչները ներկայացրեցին 1-ին կուրսերի մագիստրատուրայի ատենախոսությունների թեմաները՝

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն

Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում

1. Արտաթանգարանային միջոցառումների կազմակերպումը
2. Տիրամոր կերպարը խորհրդահայ արվեստում
3. Արվեստի ստեղծագործությունների վաճառքի առանձնահատկությունները համաշխարհային կայքերում

Մշակութաբանություն

1. Սիսիանի պատմամշակութային հուշարձանները
2. Ֆուձիյամա և Արարատ լեռների խորհրդաբանական իմաստավորումը կերպարվեստում
3. Էլիտար մշակույթի մերօրյա խնդիրները Հայաստանում
4. Գրախանութների դերը քաղաքի մշակութային կյանքի ակտիվացման գործում

Երաժշտության մանկավարժության ամբիոն

1. Երաժշտական կերպարի ընկալումը աշակերտների կողմից՝ Յուրի Գևորգյանի «Մանկական պիեսների ալբոմի» օրինակով
2. Գեղունի Չթչյանի մանկական երգերի դաստիարակչական նշանակությունը «Երաժշտություն» առարկայի դասերին
3. Ներսես Շնորհալու երաժշտա-մանկավարժական գործունեության արժևորումը երաժշտության ուսուցման գործընթացում
4. Երաժշտական ընկալման զարգացման ուղիները հանրակրթական դպրոցում
5. Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը երաժշտության միջոցով

Կերպարվեստի ամբիոն

Կերպարվեստ

1. Համակարգչային գրաֆիկայի ուսուցման դերը ՄՄՀ ստեղծագործական ունակությունների զարգացման մեջ:
2. Համակարգչային գրաֆիկայի ուսուցման մեթոդական կառուցվածքի ՄՄՀ-ի համար:
3. Համակարգչային գրաֆիկան որպես սովորողների գեղարվեստական հետաքրքրությունների ձևավորման միջոց:
4. Բնօրինակի պատկերագրման դերն ու նշանակությունը սովորողների մասնագիտական կարողությունների զարգացման գործընթացում:
5. Համաչափությունների և ծավալապլաստիկ մտածողության զարգացման միջոցներն ու եղանակները արտադպրոցական հաստատություններում:

Դկա

1. Հայաստանում թվային տեխնոլոգիաների կիրառումը մետաղագործության մեջ:
1. Ոսկերչությունը և արծաթագործությունը Հայկական գաղթօջախներում 19րդ դ.:

Որոշեցին – Հաստատել 2022-2023 ուստարվա մագիստրատուրայի 1-ին կուրսի ատենախոսությունների թեմաները:

ընթացիկ հարցեր

Լսեցին - «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման» հարցը:

Արտահայտվեցին – կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը ներկայացրեց կերպարվեստ մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Գոռ Վահանի Մելիքսեթյանի թեկնածությունը՝ նշելով, որ Գ.Մելիքսեթյանը ուսումնական տարիների ընթացքում ցուցաբերել և ցուցաբերում է բարձր առաջադիմություն:

Որոշեցին –Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կերպարվեստ մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող Գոռ Վահանի Մելիքսեթյանի թեկնածությունը ներկայացնել ծրագրի շրջանակներում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 4

2022թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման բաղադրիչների հաստատման հարցը:
2. Երաժշտական կրթություն մասնագիտության հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Վաղարշակ Գնելի Խաչատրյանի մանկավարժական պրակտիկայի (կրկնակի) մասնակցության հարցը:

Նիստին ներկա էին խորհրդի 26 անդամից 19-ը

1.ԼՍԵՑԻՆ – Բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման բաղադրիչների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ամբիոնների վարիչներ Ս.Մելիքյանը, Կ.Աղամյանը, Ս.Էլբակյանը ներկայացրերին բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման բաղադրիչները.

երաժշտության մանկավարժության ամբիոն՝
պրակտիկա՝ 20%
նվագարան՝ 40%
խմբավարություն և խմբերգային դասարան՝ 40%

արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն՝
պրակտիկա՝ 20%
ավարտական աշխատանքի պաշտպանություն՝ 80%

կերպարվեստի ամբիոն՝
պրակտիկա՝ 20%
մեթոդական հատված՝ 30%
կատարողական ստեղծագործություն՝ 50%

ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը հաղորդեց, որ ըստ մասնագիտական կամավոր գործունեության մասին կարգի ուսանողին կարող է տրամադրվել մինչև 5 միավոր (հաշվի առնելով համապատասխան հիմքները):

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ֆակուլտետի ամբիոնների ամփոփիչ ատեստավորման բաղադրիչները՝

երաժշտության մանկավարժության ամբիոն՝
պրակտիկա՝ 20%
նվագարան՝ 40%
խմբավարություն և խմբերգային դասարան՝ 40%

արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն՝
պրակտիկա՝ 20%

ավարտական աշխատանքի պաշտպանություն՝ 80%
կերպարվեստի ամբիոն՝
պրակտիկա՝ 20%
ավարտական աշխատանքի մեթոդական հատված՝ 30%
ավարտական ստեղծագործություն՝ 50%
ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը հաղորդեց, որ ըստ մասնագիտական կամավոր գործունեության մասին կարգի ուսանողին կարող է տրամադրվել մինչև 5 միավոր (հաշվի առնելով համապատասխան թղթային հիմքերը)։

2.ԼՍԵՑԻՆ – երաժշտական կրթություն մասնագիտության հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Վաղարշակ Գնելի Խաչատրյանի մանկավարժական պրակտիկայի (կրկնակի) մասնակցության հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց, որ երաժշտական կրթություն մասնագիտության հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Վաղարշակ Գնելի Խաչատրյանը 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակում չի մասնակցել ուսումնական պրակտիկային։ Լ.Այվազյանը առաջարկեց հիմք ընդունելով ուսանողի դիմումը թույլատվություն խնդրել ուսանողի պրակտիկան կազմակերպելու համար։

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր Ս.Գևորգյանին, թույլատրել ուսանողի մանկավարժական պրակտիկան կազմակերպել ս/թ նոյեմբերի 1-ից նոյեմբերի 28-ը ՀՊՄՀ թիվ 57 հիմնական դպրոցում, մեթոդիստ նշանակել Ե.Դադոյանին։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 5

2022թ. նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը
(բանավոր հարցման ձևով)
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆակուլտետի 2022 թվականի տարեկան հաշվետվության հարցը
2. 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի համար դիմած ուսանողների հետազոտական աշխատանքների վերնագրերի և ղեկավարների հարցը

1.ԼՍԵՑԻՆ - Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 2022 թվականի տարեկան հաշվետվության հարցը։

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով ամբիոնների կատարված աշխատանքը և ֆակուլտետի աշխատանքային պլանին համապատասխան քայլերը, ֆակուլտետի խորհուրդը հաստատում է 2022 թվականի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի հաշվետվությունը։

2.ԼՍԵՑԻՆ -30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի համար դիմած ուսանողների հետազոտական աշխատանքների վերնագրերի և ղեկավարների հարցը։

ՈՐՈՇԵՑԻՆ – հիմք ընդունելով կերպարվեստի և երաժշտության մանկավարժության ամբիոնների որոշումները՝ որոշեցին հաստատել կրթական ծրագրի համար դիմած ուսանողների հետազոտական աշխատանքների խորագրերը և ղեկավարներին

<<Երաժշտական կրթություն>> մասնագիտություն

1. Թաշչյան Եվա Ավետիսի -Ազգային երգարվեստի դերն աշակերտների գեղագիտական դաստիարակության գործընթացում: /ղեկավար՝ Մելիքսեթյան Գոհար/
2. Ստեփանյան Զվարթ Մխիթարի -Կոմիտաս վարդապետի ժողովրդական երգերի մշակումների արժևորումը հանրակրթական դպրոցի <<Երաժշտություն>> առարկայի դասերին: /ղեկավար՝ Մելիքսեթյան Գոհար/

<<Ուսուցման և դասավանդման մեթոդիկա>> առարկա /դասախոս Մելիքսեթյան Գոհար
Մանկավարժական պրակտիկայի մեթոդիստ-ղեկավար՝ Մաթևոսյան Շուշան

<<Կերպարվեստ>> մասնագիտություն

1. Գերպեկչյան Լուսինե Արտաշեսի – Գունագիտությունը որպես սովորողների ստեղծա գործական կարողությունների բացահայտման և զարգացման միջոց /ղեկավար՝ Սարգսյան Սևադա/

<<Ուսուցման և դասավանդման մեթոդիկա>> առարկա /դասախոս Սարգսյան Սևադա
Մանկավարժական պրակտիկայի մեթոդիստ-ղեկավար՝ Ավետիսյան Մելքոն։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 6

2022թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2022-2023 ուստարվա ավարտական աշխատանքների ընթացքը
2. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը
3. 2022-2023 ուստարվա առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները
4. Հեռակա ուսուցման 2022-2023 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստում
5. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 26 անդամից 19-ը

1.Լսեցին – 2022-2023 ուստարվա ավարտական աշխատանքների և թեզերի ընթացքի մասին

Արտահայտվեցին – ֆակուլտետի ամբիոնների վարիչներ՝ կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ Ս.Էլբակյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը ներկայացրեցին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը։ Նրանք նշեցին, որ աշխատանքները ընթանում են համապատասխան աշխատանքային գրաֆիկի։

Որոշեցին – կատարված աշխատանքները համարել բավարար։

2. **Լսեցին** – Ասպիրանտների և հայցորդների ատեստավորման հարցը

Արտահայտվեցին – Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ս.Էլբակյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը նշեցին, որ ամբիոնների վերջին նիստերում կատարվել են համապատասխան ատեստավորումներ.

կերպարվեստի ամբիոն՝ Գագիկ Ավետիսյանը կատարում է խմբագրական աշխատանքներ, Լիլիթ Ամիրջանյանը աշխատում է ատենախոսության երկրորդ գլխի վերջին ենթագլխի վրա, Նաիրա Խաչատրյանը կատարում է գիտատեսական հիմնավորման նյութերի հավաքագրում, Տարոն Ալեքսանյանը չի ներկայացրել ատեստավորման։

Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոն՝ Արփինե Թորիկյանը կատարում է գիտատեսական հիմնավորման նյութերի հավաքագրում։

Երաժշտության մանկավարժության ամբիոն՝

Սերգեյ Խաչատրյանը չի ներկայացել ամբիոն և կապ չի պաշպանում ղեկավարի հետ։

Որոշեցին – Ատեստավորել՝ կերպարվեստի ամբիոնի հայցորդներ Գագիկ Ավետիսյանին, Լիլիթ Ամիրջանյանին, Նաիրա Խաչատրյանին, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի հայցորդ Արփինե Թորիկյանին։

Չատեստավորել երաժշտության ամբիոնի հայցորդ Սերգեյ Խաչատրյանին, կերպարվեստի ամբիոնի հայցորդ Տարոն Ալեքսանյանին։

3. **Լսեցին –** 2022-2023 ուստարվա առկա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները

Արտահայտվեցին – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը ներկայացրեց, որ բոլոր քննական գրաֆիկները պատրաստ են։
Որոշեցին –աշխատանքները համարել բավարար։

4. **Լսեցին** – Հեռակա ուսուցման 2022-2023 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստում
Արտահայտվեցին – ուսումնական գծով դեկանի տեղակալ Լիանա Այվազյանը ներկայացրեց, որ հեռակա ուսուցման դասացուցակները կազմվում են ժամանակացույցին համապատասխան։
Որոշեցին –աշխատանքները համարել բավարար։

ընթացիկ հարցեր
5.ԼՍԵՑԻՆ – Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, դոկտոր Սերգեյ Արարատի Աղաջանյանի «Մշակույթի տեսություն» ուսումնական ձեռնարկի ռուսերեն թարգմանության հրատարակության երաշխավորելու հարցը։
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ա.Հակոբյանը, արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Ս.Մելիքյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լ.Ներսիսյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պ/կ, պրոֆեսորի պ/կ Ս.Էլբակյանը։ Ելույթ ունեցողները նշեցին, որ ներկայացված ուսումնական ձեռնարկը արդիական աշխատություն է և կնպաստի ռուսալեզու լսարանի հետ համագործակցությանը։
ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանին երաշխավորելու հրատարակության Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր Սերգեյ Արարատի Աղաջանյանի <<Մշակույթի տեսություն>> ուսումնական ձեռնարկի ռուսերեն թարգմանությունը։
Նիստին ներկա էին խորհրդի 26 անդամներից 19-ը։
Բաց քվեարկության արդյունքում
Կողմ - 19
Դեմ - 0
Ձեռնպահ - 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 7
2023թ. հունվարի 10-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը
(բանավոր հարցման ձևով)
ԼՍԵՑԻՆ – արվետի տեսություն, պատմություն և կառավարում բաժնի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Տաթևիկ Հովսեփյանի ուսումնական պրակտիկայի (կրկնակի) մասնակցության հարցը։
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց, որ արվետի տեսություն, պատմություն և կառավարում բաժնի առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսանող Տաթևիկ Հովսեփյանը 3-րդ կուրսի 1-ին կիսամյակում չի մասնակցել ուսումնական պրակտիկային։ Լ.Այվազյանը առաջարկեց հիմք ընդունելով ուսանողի դիմումը թույլատվություն խնդրել ուսանողի պրակտիկան կազմակերպելու համար։
ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր Ս.Գևորգյանին, թույլատրել ուսանողի ուսումնական պրակտիկան կազմակերպել ա/թ հունվարի 16-ից փետրվարի 3-ը ԳԱԹ-ում, մեթոդիստ նշանակել Ս.Գրիգորյանին։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 8

2023թ. հունվարի 16-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը
(բանավոր հարցման ձևով)

ԼՍԵՑԻՆ – Կերպարվեստ բաժնի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանող Նելլի Չաքմիշյանի մանկավարժական պրակտիկայի (կրկնակի) մասնակցության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց, որ կերպարվեստ բաժնի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանող Նելլի Չաքմիշյանը 5-րդ կուրսի 1-ին կիսամյակում չի մասնակցել մանկավարժական պրակտիկային: Լ.Այվազյանը առաջարկեց հիմք ընդունելով ուսանողի դիմումը թույլատվություն խնդրել ուսանողի պրակտիկան կազմակերպելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր Ս.Գևորգյանին, թույլատրել ուսանողի ուսումնական պրակտիկան կազմակերպել ս/թ հունվարի 17-ից փետրվարի 13-ը թիվ 122 դպրոցում, մեթոդիստ նշանակել Ա.Մխիթարյանին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 9

2023թ. հունվարի 31-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1.2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում
2.2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների հաշվետվություն
3.2022-2023 ուստարվա մանկավարաժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստում
4. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին խորհրդի 26 անդամից 19-ը

1. Լսեցին - 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան, արվեստագիտության դոկտոր Արա Հակոբյանը, ներկայացրեց 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը

Որոշեցին – հաստատել 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը:

2. Լսեցին – 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների հաշվետվությունը

Արտահայտվեցին – Ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները

բակալավրիատ

հհ	մասնագիտություն	կուրս	ուսանողների թիվ	քնն.մասն ակցել են	դրական հանձն.	անբավարա են ստացել			ազատված
						1 առ	2 առ	3 առ	
1	կերպարվ.	I	25	25	15	4	5	1	-
		II	41	41	21	12	3	5	-
		III	27	27	13	8	3	3	-
		IV	33	32	17	8	2	5	1
2	արվ.տես. պատմ. և կառավ.	I	10	10	4	-	1	2	-
		II	5	5	4	-	-	1	-
		III	5	5	4	-	-	1	-
		IV	4	4	3	1	-	-	-

3	մշակ.	I	1	1	-	-	1	-	-
		II	10	10	3	-	2	5	-
		III	11	10	7	2	-	1	1
		IV	5	5	5	-	-	-	-
4	երաժշտ. կրթ.	I	25	24	16	5	1	2	1
		II	17	17	11	1	2	3	-
		III	18	18	3	5	2	8	-
		IV	22	22	11	3	3	5	-
5	հագ. մոդել.	I	22	19	10	8	-	1	3
		II	25	25	8	3	4	10	
		III	25	23	12	4	1	6	1 1չի մասն
		IV	28	28	12	8	2	6	
6	դկա	I	18	17	8	4	3	2	1 բանակ
		II	15	15	10	2	1	2	-
	կա	III	12	12	8	1	1	2	-
		IV	17	17	7	4	2	4	-
ընդ՝			**421**	**412**	**212**	**85**	**40**	**75**	**9**

մագիստրատուրա

հհ	մասնագիտություն	կուրս	ուսանողների թիվ	քնն.մասն անցել են	դրական հանձն.	անբավարա են ստացել			ազատվածներ
						1 առ	2 առ	3 առ	
1	կերպարվ.	I	5	4	3	-	1	-	1
		II	7	7	6	-	1	-	-
2	արվ.տես. պատմ. և կառավ.	I	3	3	2	-	-	1	-
		II	2	2	2	-	-	-	-
3	մշակ.	I	1	1	1	-	-	-	-
		II	1	1	1	-	-	-	-
4	երաժշտ. կրթ.	I	5	5	3	-	1	1	-
		II	10	10	7	2	-	1	-
5	դկա	I	2	2	2	-	-	-	-
		II	2	2	2	-	-	-	-
ընդ՝			**38**	**37**	**29**	**1**	**3**	**3**	**1**

Որոշեցին – Արդյունքները համարել բավարար:

3. Լսեցին – 2022-2023 ուստարվա մանկավարաժական և ուսումնական պրակտիկաների նախապատրաստման հարցը:

Արտահայտվեցին – Ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարները Շ.Մաթևոսյանը և Մ.Ավետիսյանը ներկայացրեցին 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական կենտրոններն ու պրակտիկաների ղեկավարներին: Պրակտիկաները կմեկնարկեն. 2-րդ կուրս՝ փետրվարի 15-ից- մայիսի 24-ը, 3-րդ կուրս՝ փետրվարի 9-ից – մարտի 22-ը, հեռակա ուսուցման 3-րդ կուրսի պրակտիկան կանցկացվի փետրվարի 27-ից - մարտի 27-ը.

երաժշտական կրթություն մասնագիտության

Առկա ուսուցման 2-րդ կուսի մանկավարժական պրակտիկան կանցկացվի ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմն.դպրոցում, մեթոդիստ՝ Ե.Դաղոյան -17 ուսանող:

Առկա ուսուցման 3-րդ կուրս՝ Խ.Աբովյանի անվ. թիվ 2 հիմն. դպրոցում, մեթոդիստ՝ Ա. Գևորգյան և Գագիկ Ստեփանյանի անվ. թիվ 135 հիմն.դպրոցում մեթոդիստ՝ Ն.Մարգարյան: Կուրսը բաղկացած է 18 ուսանողներից (2 խումբ):

Հեռակա ուսուցման 3-րդ կուրս. Վազգեն Ա-ի անվ. Թիվ 168 հիմն.դպրոցում, մեթոդիստ՝ Ա.Օջախյան և Ստ.Շահումյանի անվ. Թիվ 1 հիմն. դպրոցում, մեթոդիստ՝ Ս.Պետրոսյան, 1 ուսանող կանցնի անհատական պրակտիկա Երևանի Հ.Շիրազի անվ. թիվ 169 հիմն.դպրոցում, քանի որ աշխատում է այդ դպրոցում որպես երգի ուսուցչուհի: Կուրսը բաղկացած է 14 ուսանողներից (2 խումբ):

Արվեստի տես., պատմ. և կառավարում, մշակութաբանություն մասնագիտությունների

ուսումնական պրակտիկան կանցկացվի Խ.Աբովյանի տուն-թանգարանում

Արվեստի տես., պատմ. և կառավարում՝ 2-րդ կուրս. մեթոդիստ Լ.Իսկոյան, 5 ուսանող,

3-րդ կուրս մեթոդիստ Ա.Համբարյան, 5 ուսանող

Մշակութաբանություն՝ 2-րդ կուրս մեթոդիստ Վ.Գամաղելյան, 10 ուսանող,

3-րդ կուրս մեթոդիստ Ս.Մելիքյան, 10 ուսանող:

հագուստի մոդելավորում, դկա, կերպարվեստ մասնագիտությունների առկա ուսուցման 2-րդ կուրսի ուսումնական պրակտիկան կանցկացվի Երևանի շրջակայքում (պլեներ)՝.

ԴԿԱ՝ մեթոդիստ Տ.Դավթյան,15 ուսանող

ՀՄ՝ մեթոդիստ Է.Մեդրակյան, 12 ուսանող

ՀՄ՝ մեթոդիստ Տ.Դավթյան, 12 ուսանող

Կերպարվեստ՝ մեթոդիստ Գ.Գրիգորյան,14 ուսանող

Կերպարվեստ՝ մեթոդիստ Ս.Սարգսյան, 13 ուսանող

3-րդ կուրսի պրակտիկաները կանցկացվեն.

ԴԿԱ՝ ֆակուլտետի ներսում, Ա.Մխիթարյան, 12ուսանող

առկա ուսուցման 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկա՝ ՀՄ՝ «Թեթև արդյունաբերության արտահանման կոնսորցիում» ՍՊԸ, մեթոդիստ Կ.Խաչատրյան, 12 ուսանող, մեթոդիստ Մ.Մելքոնյան, 12 ուսանող (2 խումբ):

մանկավարժական պրակտիկա՝ Ա.Հովհաննիսյանի անվան թիվ 194 հիմն.դպրոց կերպարվեստ՝ մեթոդիստ Ս.Սարգսյան, 10ուսանող

Ջ.Կիրակոսյանի անվ. թիվ 20 հիմն. դպրոց կերպարվեստ՝ մեթոդիստ Է.Մուրադյան, 9 ուսանող

Խ.Աբովյանի անվ. թիվ 2 դպրոց Կերպարվեստ մեթոդիստ Վ.Կարապետյան, 8 ուսանող:

հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ***մանկավարժական*** պրակտիկան կանցկացվի Ա.Հովհաննիսյանի անվ. թիվ 194 հիմն. դպրոցում կերպարվեստ մեթոդիստ Ա.Մխիթարյան, 8 ուսանող

Որոշեցին – Աշխատանքները համարել բավարար:

ընթացիկ հարցեր

4. Լսեցին – Հանրակրթական դպրոցներում փորձի փոխանակման և վարպետաց դասեր կազմակերպելու հարցը:

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան արվ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հակոբյանը իր ելույթում նշեց մասնագիտական ոլորտում փորձի փոխանակման կարևորությունը և առաջարկեց մոտակա շրջանում այդ ծրագրում ընդգրկել 2 դպրոց և կազմակերպել գործընթացը:

Որոշեցին – նախապատրաստել ծրագիր համապատասխան գործընթացն կազմակերպելու նպատակով:

5. Լսեցին –Կերպարվեստ մասնագիտության ավարտական աշխատանքի մեթոդական հատվածի մասին:

Արտահայտվեցին – ֆակուլտետի դեկան արվ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հակոբյանը նշեց, որ բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների ավարտական աշխատանքը պետք է պարտադիր ունենա մեթոդական հատված, որում կարտացոլվի ընտրված թեմայի դասավանդման մեթոդական հիմնավորումը 10-15 էջ տեքստային ծավալով, և դրա 50% կազմող հավելված:

Գիտության գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը հիշեցրեց մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ծավալի մասին: Մագիստրոսական թեզեր՝ 35-40 էջ տեքստային ծավալ: Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի բակալավրի կրթական ծրագրի ավարտական աշխատանքների ծավալ՝ 25-30 տեքստային էջ:

Որոշեցին – Բակալավրի կրթական ծրագրի կերպարվեստ մասնագիտության ավարտական աշխատանքը պետք է ունենա մեթոդական հատված՝ տեքստային ծավալը 10-15 էջ և դրա 50% չգերազանցող հավելված։

6. Լսեցին – Ֆակուլտետի որակի ապահովման պատասխանատուի հաշվետվությունը

Արտահայտվեցին – ֆակուլտետի գիտական գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց որակի ապահովման պատասխանատուի տարեկան հաշվետվությունը։ ՈԱ պատասխանատու Հ.Մուկոյանը ներկայացրել էր որակի բարձրացման, ուսանողների շրջանում կատարված առցանց հարցումների, վերհանված խնդիրների մանրամասն վերլուծությունը։

Որոշեցին – հաստատել ֆակուլտետի ՈԱ պատասխանատուի հաշվետվությունը։

7. Լսեցին – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Տարոն Ալեքսանյանի ատեստավորման հարցը

Արտահայտվեցին – Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կ.Աղամյանը նշեց, որ ամբիոնի վերջին նիստին Տ.Ալեքսանյանը ներկայացրել է հաշվետվություն, նաև կատարված աշխատանքի վերաբերյալ դրական կարծիք արտահայտեց ատենախոսության ղեկավար՝ մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Անուշ Եղիազարյանը։

Որոշեցին – Ատեստավորել՝ կերպարվեստի ամբիոնի հայցորդ Տարոն Ալեքսանյանին։

8. Լսեցին – ֆակուլտետի ուսանողական խորհրդի 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը։

Արտահայտվեցին – ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Անահին Մխիթարյանը ներկայացրեց 2-րդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքային պլանը։

Որոշեցին – հաստատել ֆակուլտետի ուսանողական խորհրդի 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանը։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 10

2023թ. փետրվարի 8-ի գեղարվեստական կրթության ֆակուլտետի
խորհրդի նիստի (բանավոր հարցման ձևով)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Համալսարանի գիտական խորհրդի կազմում գեղարվեստական կրթության ֆակուլտետի կողմից առաջարկվող թեկնածուի ընդգրկելու հարցը։

ԼՍԵՑԻՆ – Համալսարանի գիտական խորհրդի կազմում գեղարվեստական կրթության ֆակուլտետի կողմից առաջարկվող թեկնածուի ընդգրկելու հարցը։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Նիստի նախագահ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հակոբյանը ներկայացրեց արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սաթենիկ Հարությունի Մելիքյանի թեկնածությունը։

ՈՐՈՇԵՑԻՆ – Առաջարկել համալսարանի գիտական խորհրդի կազմում ընդգրկել արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սաթենիկ Հարությունի Մելիքյանին։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 5

2023թ. մարտի 1-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի համար դիմած ուսանողների հետազոտական աշխատանքների վերնագրերի և ղեկավարների հարցը

ԼՍԵՑԻՆ -30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման կրթական ծրագրի համար դիմած ուսանողների հետազոտական աշխատանքների վերնագրերի և ղեկավարների հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ – հիմք ընդունելով կերպարվեստի և երաժշտության մանկավարժության ամբիոնների որոշումները՝ որոշեցին հաստատել կրթական ծրագրի համար դիմած ուսանողների հետազոտական աշխատանքների խորագրերը և ղեկավարներին

<<Երաժշտական կրթություն>> մանագիտություն

1. Պարսիյանց Գեղանուշ Ժիրայրի - Երաժշտությունը, որպես արվեստի տեսակ և որպես դպրոցում ուսուցանվող առարկա: /ղեկավար՝ Յուրի Յուզբաշյան
2. Բալբաբյան Սերինե Բորիսի –Հոգևոր երգերի ուսուցման առանձնահատկությունները հիմնական և ավագ դպրոցներում: /ղեկավար՝ Յուրի Յուզբաշյան
3. Մովսիսյան Արփինե Ռոբերտի - Ազգային երգարվեստի ուսուցումը հանրակրթական դպրոցի երաժշտության դասին: /ղեկավար՝ Յուրի Յուզբաշյան
4. Այվազյան Մարիամ Վահանի - Երաժշտության ուսուցման և դասավանդման մեթոդներ: /ղեկավար՝ Գոհար Մելիքսեթյան
5. Հովհաննիսյան Արևիկ Արմենի - Հայ ժողովրդական երաժշտության տեղն ու դերը տարրական դպրոցի երաժշտության դասերին: /ղեկավար՝ Գոհար Մելիքսեթյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

2023թ. ապրիլի 17-ին տեղի ունեցավ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի ընտրություն:

Նիստին ներկա էին ֆակուլտետի խորհրդի 26 անդամից 25-ը

ԼՍԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Նիստի նախագահ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը նշեց, որ գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնին առաջադրված է մեկ թեկնածու՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հրավարդի Հակոբյանը:

Համալսարանի գիտական քարտուղար Մարիամ Իսպիրյանը տեղեկացրեց, որ Ա. Հակոբյանը ներկայացրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Ելույթով հանդես եկավ Արա Հակոբյանը: Նա անդրադարձավ անցած հինգ տարիների կատարած աշխատանքներին և նոր ծրագրերին ու բարեփոխումներին: Նիստի նախագահ դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը առաջարկեց ընտրել հաշվիչ հանձնաժողով, որն էլ միաձայն որոշմամբ կազմվեց երեք անձից՝ արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սաթենիկ Մելիքյան, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Աննա Հարությունյանը, կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների թեկնածու Արտաշես Քեշիշյանը:

Ռեկտորի կողմից առաջարկվեց գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի ընտրությունը անցկացնել փակ գաղտնի քվեարկությամբ: Քվեարկության արդյունքում կողմ քվեարկեցին խորհրդի բոլոր ներկա անդամները:

Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մելիքյանը ներկայացրեց արդյունքները՝

կողմ - 25
դեմ - 0
անվավեր – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների՝ (խորհրդի 26 անդամներից նիստին ներկա էին 25-ը, 25 կողմ, 0 դեմ, 0 անվավեր քվեաթերթ) գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրված համարել արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արա Հրավարդի Հակոբյանին։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 13

2023թ. ապրիլի 28-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության
ֆակուլտետի խորհրդի նիստ
ՕՐԱԿԱՐԳ՝

1. Մասնագիտական կամավորական գործունեության համար միավորներ տրամադրելու հարցը
2. ընթացիկ հարցեր

նիստին ներկա էին ֆակուլտետի խորհրդի 26 անդամից 20-ը

Լսեցին – 2022-2023 ուստարվա 4-րդ կուրսի ուսանողներին կամավորական աշխատանքի համար հավելյալ միավորներ տրամադրելու հարցը

Արտահայտվեցին –ֆակուլտետի փոխդեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց ավարտական (4-րդ) կուրսի այն ուսանողների անունները, որոնք ներկայացրել են մասնագիտական կամավորական գործունեության մասին համապատասխան փաստաթղթերը.
Մուրադյան Գայանե-մշակ.- 200 ժամ՝ 5 միավոր
Դավիթավյան Սուսաննա- մշակ.- 230 ժամ՝ 5 միավոր
Կիրակոսյան Հերմինե- մշակ.-250 ժամ՝ 5 միավոր
Նազարեթան Վարդանուշ- մշակ.- 200 ժամ՝ 5 միավոր
Հակոբյան Անի- մշակ.- մշակ.-200 ժամ՝ 5 միավոր
Աղաջանյան Աննա- կերպ.- 13 ժամ՝ 0.33 միավոր
Վարոսյան Վիկտորիա- կերպ.- 48 ժամ՝ 1.2 միավոր

Որոշեցին –վերընշված կամավորական գործունեություն կատարած 4-րդ կուրսի ուսանողներին տրամադրել համապատասխան միավորներ.
Մուրադյան Գայանե-մշակ.- 200 ժամ՝ 5 միավոր
Դավիթավյան Սուսաննա- մշակ.- 230 ժամ՝ 5 միավոր
Կիրակոսյան Հերմինե- մշակ.-250 ժամ՝ 5 միավոր
Նազարեթան Վարդանուշ- մշակ.- 200 ժամ՝ 5 միավոր
Հակոբյան Անի- մշակ.- մշակ.-200 ժամ՝ 5 միավոր
Աղաջանյան Աննա- կերպ.- 13 ժամ՝ 0.33 միավոր
Վարոսյան Վիկտորիա- կերպ.- 48 ժամ՝ 1.2 միավոր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

2023թ. մայիսի 30-ին տեղի ունեցավ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղարվեստական կրթության
ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2022-2023 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների ամփոփում
2. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում
3. 2022-2023 ուստարվա հեռակա բակալավրիատի ավարտական կուրսի քննաշրջանի և պարտքերի մարման արդյունքների ամփոփում
4. ընթացիկ հարցեր

նիստին ներկա էին խորհրդի 26 անդամից 18-ը

1. ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանի պարտքերի մարման արդյունքների ամփոփման հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց արդյունքները.

Առկա բակալավր

Բաժին	Ուսանող	Դրական	Հեռացված
Կերպարվեստ	30	30	-
ԴԿԱ	17	17	-
Արվեստի տես.պատմ. և կառավարում	4	4	-
Մշակութաբանություն	5	5	-
Հագուստի մոդելավորում	28	28	-
Երաժշտական կրթություն	22	19	3

Մագիստրատուրա

Բաժին	Ուսանող	Դրական	Հեռացված
Կերպարվեստ	7	7	-
ԴԿԱ	2	2	-
Արվեստի տես.պատմ. և կառավարում	2	2	-
Մշակութաբանություն	1	1	-
Երաժշտական կրթություն	10	10	-

ՈՐՈՇԵՑԻՆ – Արդյունքները համարել բավարար։

2.Լսեցին - 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում

Արտահայտվեցին – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց, որ բոլոր գրաֆիկները պատրաստ են, հաստատված և հասանելի են շահառուներին։

Որոշեցին – Աշխատանքները համարել բավարար։

3.Լսեցին - 2022-2023 ուստարվա հեռակա բակալավրիատի ավարտական կուրսի քննաշրջանի և պարտքերի մարման արդյունքների ամփոփում

Արտահայտվեցին – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց արդյունքները.

Հեռակա

Բաժին	Ուսանող	Դրական	Հեռացված
Կերպարվեստ	13	13	-
Երաժշտական կրթություն	12	12	-
Արվեստի տես.պատմ. և կառավարում	3	3	-
Մշակութաբանություն	2	2	-

Որոշեցին – Արդյունքները համարել բավարար։

ընթացիկ հարցեր

4. ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Մանե Բարեղամյանի «Երգչական ձայնի ձևավորման և զարգացման մանկավարժական պայմանները» խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի ժպ Ա.Հարությունյանը իր ելույթում նշեց, որ թեման արդիական է և անհրաժեշտ դասավանդման պրոցեսում: Խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Մանե Բարեղամյանին «Երգչական ձայնի ձևավորման և զարգացման մանկավարժական պայմանները» խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, երաժշտությամբ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրի Յուզբաշյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 26 անդամներից 18-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ- 18

Դեմ - 0

Ձեռնպահ – 0

5.Լսեցին – Ֆակուլտետի կանոնադրության վերանայման հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի գիտական գծով դեկանի տեղակալ Ա.Բաղդասարյանը ներկայացրեց կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները, որի համար հիմք է հանդիսացել ՀՊՄՀ կանոնադրությունը:

Որոշեցին – Հաստատել վերանայված և վերամշակված Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կանոնադրությունը:

6.Լսեցին – ասպիրանտական քննությունների հարցաշարերի և քննական հանձնաժողովների հարցը

Արտահայտվեցին – քննարկման արդյունքում երաժշտության մանկավարժության ամբիոնի կողմից առաջարկվեց ասպիրանտական քննության հանձնաժողովների անդամների հետևյալ կազմը՝

Յու.Յուզբաշյան՝ մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Գ.Մելիքսեթյան՝ մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ

Ա.Հարությունյան՝ արվ.գիտ.թեկնածու, դոցենտ

կերպարվեստի ամբիոնի կողմից՝

Ա.Եղիազարյան՝ մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Ա.Քեշիշյան՝ մանկ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր

Ա.Մարտիրոսյան՝ մանկ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր

դիտարկվեցին ասպիրանտուրայի ընդունելության հարցաշարերը

Որոշեցին – Հաստատել ներկայացված հարցաշարերը և ասպիրանտուրայի քննության հանձնաժողովների հետևյալ կազմերը.

երաժշտության մանկավարժության ամբիոնի՝

Յու.Յուզբաշյան՝ մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Գ.Մելիքսեթյան՝ մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ

Ա.Հարությունյան՝ արվ.գիտ.թեկնածու, դոցենտ

կերպարվեստի ամբիոնի՝

Ա.Եղիազարյան՝ մանկ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր

Ա.Քեշիշյան՝ մանկ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր

Ա.Մարտիրոսյան՝ մանկ.գիտ.թեկնածու, պրոֆեսոր:

7.Լսեցին – Ֆակուլտետի արկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Հարությունյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մարտիրոսյանը ներկայացրեցին առկա ուսուցման և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններ։

Որոշեցին – Հաստատել առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 15

2023թ. հունիսի 21-ին տեղի ունեցավ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը (բանավոր հարցման ձևով)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններ
2. Ընթացիկ հարցեր

Լսեցին – Ֆակուլտետի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների հարցը

Արտահայտվեցին – ֆակուլտետի արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Հարությունյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մարտիրոսյանը ներկայացրեցին հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններ։

Որոշեցին – Հաստատել հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունները։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

2023թ. հուլիսի 7-ին տեղի ունեցավ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2022-2023 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում
2. 2022-2023 ուստարվա ամբիոնների կիսամյակային միջոցառումների հաշվետվություններ (ամբիոնների վարիչներ)
3. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում
4. 2022-2023 ուստարվա աշխատանքների ամփոփում (ֆակուլտետի դեկան)
5. ընթացիկ հարցեր

նիստին ներկա էին խորհրդի 26 անդամից 18-ը

1. ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփման հարցը

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյանը ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման արդյունքները.

Առկա բակալավր

Բաժին	Ուսանող	Դրական	Անբավարար
Կերպարվեստ	30	30	-

ԴԿԱ	17	17	-
Արվեստի տես.պատմ. և կառավարում	4	4	-
Մշակութաբանություն	5	5	-
Հագուստի մոդելավորում	28	28	-
Երաժշտական կրթություն	19	19	-

հեռակա բակալավր

Բաժին	Ուսանող	Դրական	Անբավարար
Կերպարվեստ	13	13	-
Արվեստի տես.պատմ. և կառավարում	3	3	-
Մշակութաբանություն	2	1	1
Երաժշտական կրթություն	12	12	-

Մագիստրատուրա

Բաժին	Ուսանող	Դրական	Անբավարար
Կերպարվեստ	7	7	-
ԴԿԱ	2	2	-
Արվեստի տես.պատմ. և կառավարում	2	2	-
Մշակութաբանություն	1	1	-
Երաժշտական կրթություն	9	9	-

ՈՐՈՇԵՑԻՆ – Արդյունքները համարել բավարար։

2.Լսեցին - 2022-2023 ուստարվա ամբիոնների կիսամյակային միջոցառումների հաշվետվություններ (ամբիոնների վարիչներ)

Արտահայտվեցին – արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ Ս.Մելիքյանը, երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի ժպ Ա.Հարությունյանը, կերպարվեստի ամբիոնի վարիչի ժպ Ա.Մարտիրոսյանը։ Իրենց ելույթներում ամբիոնների վարիչները մանրամասն ներկայացրեցին կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումները։

Որոշեցին – Աշխատանքները համարել բավարար։

3.Լսեցին - 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում

Արտահայտվեցին – ֆակուլտետի ուսումնական գծով դեկանի տեղակալ Լ.Այվազյանը ներկայացրեց արդյունքները.

	ընդհանուր	**քննությունները դրական հանձնած**	**անբավարար**	**ազատված**
բակալավրիատ 1-3-րդ կուրսեր (առկա)	304	163	140	1
մագիստրատուրա 1-ին կուրս	**15**	**10**	**5**	**-**

Որոշեցին – Արդյունքները համարել բավարար։

4. ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուստարվա աշխատանքների ամփոփում (ֆակուլտետի դեկան)։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյանը ամփոփեց ուստարվա ընթացքում կարտարված գործողությունները, նշելով, որ բոլոր աշխատանքները ունեն դրական աճ։

ՈՐՈՇԵՑԻՆ – Աշխատանքները համարել բավարար։

ընթացիկ հարցեր

5.ԼՍԵՑԻՆ – Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանի «Ոսկերչական արվեստի պարապմունքների մեթոդական համակարգը (Մ.Մեբաստացի կրթահամալիր)» խորագրով ատենախոսության թեման և ատենախոսության ղեկավար հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Ա.Քեշիշյանը, պրոֆեսոր Լ.Ներսիսյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ թեման արդիական է և ժամանակահունչ, այն անհրաժեշտ է և օգտակար դասավանդման պրոցեսում: Հիմք ընդունելով հայցորդի դիմումը և ամբիոնի հ.18 նիստի քաղվածքը՝ խորհրդի նախագահ Ա.Հակոբյանը ներկայացրեց ատենախոսի նոր ղեկավարին՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դիմել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդին հաստատելու Կերպարվեստի ամբիոնի հայցորդ Դավիթ Պետրոսյանի «Ոսկերչական արվեստի պարապմունքների մեթոդական համակարգը (Մ.Մեբաստացի կրթահամալիր)» խորագրով ատենախոսության թեման, ԺԳ.00.02 (դասավանդման և դաստիարակության մեթոդիկա, կերպարվեստ մասնագիտությամբ), ատենախոսության ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանին:

Նիստին ներկա էին խորհրդի 26 անդամներից 18-ը:

Բաց քվեարկության արդյունքում

Կողմ- 18

Դեմ - 0

Ձեռնպահ – 0

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ